

ՅԱՅՅԱԳԾՔ ՆՈՐԻԿԻ

ՆՈՐԻԿԻ ԾՆՈՒՆԴԸ

Հակառակ սովին
Հակառակ ջարդին ու պատերազմին
Հակառակ պետական փլանաւորման
օր մըն ալ
Երկրի բնակչութիւնը պիտի յորդի
պիտի յորդի դէպի անջրպետ

ու երբ որ յորդի
յորդի անջրպետ
Հակառակ պետական փլանաւորման
Հակառակ ջարդին ու պատերազմին
Հակառակ սովին
Նորիկ պիտի ծնի

ԱՊԱՀՈՎ

Հեռու
Երկրի խառնիճաղանճէն
ուր ամէն հաշիւ
կը լղրճի
տարակոյսի հաշիւով

Նորիկ
կորերն ի վեր ճշգրտօրէն ճշդուած
կը ճախրէ

անսայթաք
կը ճախրէ
ապահով —

Հեռու

ՕՏԱՐ

Մեզմէ մէկը հոն
երբ անեզրութեան դուռը կը զարնէ
մեր ողբերն այնքան կը պզտիկնան հոս
որ չ'արժեր երգել

ԾԻՐ

Ծիր ծիր
կը շրջի Նորիկ

մենք
— մենք ալ —
կը քալենք քովն ի վեր
մեր հին թիւերը
գաղտնօրէն
սեղմած մեր կուրծքին

ԱՆԾԱՆՕԹ

Եթէ այս
ներամփոփ
երգերը լռեն
(ու պիտի լռեն)
Եթէ մոռցուին
(պիտի մոռցուին)
ու մեր ձայները

պիտի թափին դուրս
 — դէպի անջրպետ —
 Պիտի արձագանդեն
 (պիտի արձագանդեն)
 հազարաձայն — ետ —

բայց վերադարձին
 պիտի մեզ չճանչնան

ՊՏՈՅՏ

Գիշեր մըն ալ Նորիկ
 երբ ման գայ ծիր կաթինն ի վեր կայծկլտուն
 պիտի Երկիրը նշմարէ հեռուէն

եւ անոր կիսաշող լոյսին տակ աղօտ
 պիտի չըմբռնէ
 Թէ քերթող մըն է ապրեր ատենօք —
 ապրեր փոխանակ աստղերուն նայելու
 նայեր ինքն իր մէջ

ԼՈՅՍԻ ԽԱՂ

Արբանեակներու եռուղեւին քով
 մշտնջենական
 երթեւեկին քով մոլորականերու

պաղ ու անայլայլ
 միգամածներ կան —
 անոնք կը կքին իրենց դարաւոր
 իմաստութեան տակ
 ու կը փշրուին անձայն անշշուկ

Նորիկ անոնք կան կը կարծէ հեռուանց
 — կ'երթայ որ չկան

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Ուղղաձիգ
 հետեւաբար մէկը միւսին զուգահեռ
 լուսայեռ
 երկու դիծ
 կ'երկարին դէպի անհուն
 որպէսզի հոն — հեռուն
 շատ հեռուն —
 կարօտէ մը վերջ անսկիզբ անվերջ
 վերջապէս հասնի
 դաշին իրարու

մինչդեռ Նորիկ
 իր ծիրին վրայ հորիզոնական
 կը ճախրէ անփոյթ
 մէկ ուղղաձիգէն միւս ուղղաձիգին
 ու կը զարմանայ թէ ինչու անոնք
 կու գան անհունէն
 կ'երկարին անհուն

ՁԵՐԲԱԶԱՏ

Մարդ մարդու
 յարաբերութիւնն երբ դադրի
 — երբ մարդու եւ մարդու միջեւ
 մտնէ մեքենան —

Նորիկ
 իր բոլոր բարդոյթները կը փաթթէ
 հրթիռի մը վրայ սէգ

կ'արձակէ դէպի երկինք
 դէպի մխիթարութիւն

ՎԵՐԱԴԱՐՁ

Պարապ էր ափը երբ սեղմեց ամուր
 — աւելի ամուր —
 սեղմեց — երբ տակաւ կ'անջատուէր Երկրէն
 Հեղ մ'ալ բացաւ որ ափին մէջը ի՞նչ —
 ցորենի հասկ մը — տակաւին կանանչ —
 կարծես նորածիլ

ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

Երբ — մեր տեղ —
 յայտագրուած երիզներ կը խորհին
 մեզի համար
 Փիչոն փխտիկը
 որ մեքենայ գործածել չի գիտեր
 պիտի խորհի
 մեր ծոյլ ուղեղներէն աւելի լաւ
 աւելի շատ
 ու հարիւր հնարք պիտի հնարէ
 ինքնապաշտպանութեան համար
 մեքենային դէմ

ԳՈՌ

Նորիկ մարդու ձայն ուղեց իմանալ
 կոճակը դարձուց
 — խօսակից չկար
 ինքնիրեն խօսիլ փորձեց — չկրցաւ —
 բառերը իմաստ փոխեր էին նախ
 ու յետոյ մեռեր

Նորիկ նոր բառեր չինեց ըստ իրեն
 կոխեց կոճակին —
 իր ձայնը այդքան գոռ է — չէր գիտեր

ՆՈՐԻԿԻՆ ԿԻՆԸ

Նորիկին կինը աննիւթ ճառագայթ
 խուրճ ըլլալ — անշեղ սլանալու է
 Նորիկին կինը սլաք անսխալ
 չափ ըլլալ — անթարթ յայտագրելու է
 Նորիկին կինը ռումբի կաղապար
 հիւլէ փշրելու
 նէօթրօն տաշելու
 մագնիսական իր դաշտին մէջ ծփուն
 ոյժ ըլլալ — քիչ քիչ ճարճատելու է
 Նորիկին կինը սաղմի պահարան
 իգանալու է

ՍԵՐԵՆԱՏԻ ՊԵՍ

Անջրպետին մէջ
 Նորիկ աստղեր տեսաւ երկարած պարապին
 եղբայրօրէն
 եղբայրութեան համար
 մտերմօրէն
 մտերմութեան համար
 Նորիկ անցաւ զգոյշ անոնց առջեւէն
 ու գնաց պոչի մտաւ
 աչքերը երկարած դէպի անջրպետ
 — մոռցած թէ ինչու —

ՆՈՐԻԿ ՄԵՌԱԻ

Թէ մինչեւ ուր պէտք է որ քալէր
 Նորիկ գիտէր

սակայն քայլ մըն ալ աւելի անդին
նետեց ու մեռաւ

Ոչ ինք ոչ ալ մենք
այնտեղ հասնելու պատրաստ չէինք դեռ

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Հող չէր եւ թէ հող պիտի չդառնար

Ան պիտի հալէր անջրպետին մէջ
պիտի իր լոյսը կաթէր մեր վրայ
արեւուն շողին հետ ընդելուզուած

Հող չէր եւ թէ հող պիտի չդառնար

Կ. Պոլիս, 1978

ՋԱՀՐԱՏ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ՄԵԾ ՔԱՂԱՔԸ

Գրեց
ՋԱՀՐԱՏ

Յառաջարկ՝ Ալ. Թովչեանի, «Սովետա-
կամ Գրող» Հրտկչ., Երեւան 1978, էջ 188:

«Սովետական Գրող» հրատարակչու-
թենէն 1978ի ընթացքին «Մեծ Քաղաքը»
ընդհանուր խորագիրով լոյս տեսած են
սփիւռքահայ յայտնի բանաստեղծ Ջահ-
րատի քերթուածները: Գիրքը կը պա-
րունակէ հեղինակին «Մեծ Քաղաքը»
(1960), «Բարի Երկինք» (1970) ու «Կա-
նանչ Հող» (1976) անուններուն ներքեւ
ներկայացուած բանաստեղծութիւնները՝
մեծ մասով: Հատորին յառաջաբանը գը-
րած է Ալեքսանդր Թովչեան:

Այսօր եթէ նոյնիսկ տակաւին կը
հանդիպինք անձերու՝ որոնք յամառ թե-
րահաւատութեամբ մը կ'ողջունեն Ջահ-
րատի եւ այդ ուղիով ընթացող մեր
գնորդ գրականութեան յայտնի դէմքե-
րու գործերը, սակայն այլեւս իրակա-
նութիւն մըն է թէ լոկ նոր շունչ մը
բերելու փափաքը, եւ կամ ժամանակա-
կից օտար գրականութիւններու ազդե-
ցութիւնը չէր գիրենք բանաստեղծ դար-
ձնողը. ո՛չ ալ անոնց գիրքը մեր նոր
չրջանի գրականութեան մէջ անկարելի
փակագիծ մը եղաւ: Անոնք իրենց գոր-
ծով շարունակեցին քալել այն ճամբա-
յէն, որ բացուած էր Ա. Շաւարշներու,
Կ. Ճանճիկեաններու եւ ուրիշներու
կողմէ:

Երբանէ մը վերջ ուր մէկտեղուեր են
Վարդաթան, Միամանթօ, Թէքէեան, Մե-
ծարենց, Ջարիֆեան եւ ամբողջ հոյլը

այն գրողներուն, որոնք կոչուեր են
«գեղադէտ սերունդ» եւ որոնցմէ ծա-
ւալած գրական ճաշակը, աւելի քան
կէս դար ետք, դեռ այսօր եւս իր հը-
մայքին տակ կը պահէ հայ գրականու-
թեան հաղորդակից մարդը, դիւրին
չէր անկասկած՝ հեղասահ անցքով մը
դառնալ գնորդին, ջանալ հասկնալ ու
սիրել դայն: Եւ սակայն ամէնէն վերա-
պահ կարծիքներն իսկ դժուար է թէ յե-
նակէտ մը գտնեն զօրելու այլեւս, երբ
այսօր Ջահրատի մը գործը չի մնար լոկ
հայ գրականութեան չրջածիրին մէջ եւ
— հող չէ թէ համեստ տարողութեամբ —
բաղմամբիւ լեզուներու թարգմանութիւն-
ներ, ինչպէս՝ անգլերէն, ռուսերէն,
յունարէն, լիթուաներէն եւլն., դայն կը
ծանօթացնեն նաեւ օտարներու: Չենք
անգիտանար որ գրական գործի մը ար-
ժէքին նկատմամբ միայն ժամանակին
տալիք դատաստանը կրնայ վճարկան
ձայն մը ունենալ: Միւս կողմէ, հարկ
է ընդունիլ նաեւ որ սփիւռքահայ բա-
նաստեղծութեան մարդին մէջ վերջին
տարիներու ընթացքին երեւան եկած նո-
րարարութեան ինչ ինչ օստմանից ճի-
գեր արդէն իսկ առաւելագոյն խորու-
թիւն մը կ'ընծայեն Ջահրատի սերուն-
դին առնչակցող «ժամանակ» ազդակին:

Ջահրատի գրականութիւնը գլխաւո-
րապէս իր արտայայտութեան ձեւով ու
ոճով է Ոտր: Իր նիւթերը՝ սէրը, մար-
դը, երազը, առանձնութիւնը, զանազան
երեւոյթները ընկերային կեանքին եւլն.
գոյութիւն ունին արդէն գրականութեան
ամէն շրջաններուն. եւ ո՞վ, ո՞ր գրա-
դէտը պիտի յաւակնէր ըսած ըլլալ իրան
մը, արտայայտուիլ նիւթի մը մասին որ
իրմէ առաջ ոչ ոքի գրիչին տակ ինկած
ըլլար: